



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

2014 թ.-ի ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԵՆ՝ ՆՈՒՆԵ ՄԿՐՏՁՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

փետրվար, 2015



1. Ներածություն

«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի համաձայն, Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության գնահատման մարմիններին հավատարմագրման ծառայություններ մատուցող միակ մարմինը «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ն է, որը ստեղծվելով ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 19-ի N 890-Ն որոշմամբ՝ իր գործունեությունը սկսել է 2012թ. դեկտեմբերից: Իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը ապահովում է հավատարմագրման գործընթացի իրականացումը, մասնավորապես՝ ընդունում, գրանցում է հավատարմագրման հայտը, իրականացնում է հավատարմագրմանը հավակնող համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող ֆիզիկական ու իրավաբանական անձանց (համապատասխանության գնահատման մարմինների, այսուհետ՝ ՀԳՄ) կողմից ներկայացված հավատարմագրման փաստաթղթերի փորձաքննություն, համապատասխանության գնահատում՝ ըստ ՀԳՄ-ի գտնվելու վայրի, կազմակերպում է տեխնիկական կոմիտեների աշխատանքը, հրավիրում է հավատարմագրման խորհրդի նիստը, որի արդյունքում ընդունվում է որոշում ՀԳՄ-ին հավատարմագրելու, հավատարմագրումը մերժելու, հավատարմագրման ոլորտը ընդլայնելու, կրճատելու, հավատարմագրման վկայագրի գործողությունը կասեցնելու, վերականգնելու, դադարեցնելու վերաբերյալ: Ձևակերպում, գրանցում է հավատարմագրման վկայագիրը՝ ապահովում է հավատարմագրված ՀԳՄ-ների պարբերական գնահատումը, իրականացնում, վարում է հավատարմագրված ՀԳՄ-ների և հավատարմագրման

գործընթացում ընդգրկված գնահատողների ու փորձագետների գրանցամատյանները և այլն:

Հավատարմագրումը տարածվում է հետևյալ ոլորտների/ գործունեությունների վրա

Հավատարմագրումը	Ոլորտը/գործունեությունը	Ստանդարտը
Լաբորատորիաների	Փորձարկման	ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025
	Տրամաչափարկման	ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17025
	Բժշկական	ՀՍՏ ԻՍՕ 15189
Սերտիֆիկացման մարմինների	Արտադրանքի	ՀՍՏ ԵՆ 45011/ ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065
	Անձանց	ՀՍՏ/ԻՍՕ ԻԷԿ 17024
	Կառավարման համակարգերի	ՀՍՏ/ԻՍՕ ԻԷԿ 17021
Տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների	Տեխնիկական հսկողություն	ՀՍՏ/ԻՍՕ ԻԷԿ 17020

2. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ


Հաշվետու ժամանակշրջանում շարունակվեց ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 1693-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարություն (2010-2020թթ)»-ով սահմանված բարեփոխումների միջոցառումների իրականացումը: Այդ ռազմավարության նպատակն է՝ ապահովել հավատարմագրման ազգային համակարգի զարգացման հեռանկարային ուղղվածությունը և գոյություն ունեցող համակարգը բարեփոխել այնպես, որ այն համապատասխանի միջազգային և եվրոպական պահանջներին:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թ-ի փետրվարի 1-ի N 70-Ա հրամանը հաստատվեց «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի հաստիքացուցակ՝ համաձայն նախատեսվել է 15 հաստիք:

2013 թվականի հունիսի 5-ին անցկացվել է մրցույթ, որին մասնակցել են նաև ՀԱՄ-ի աշխատակազմը (բացառությամբ՝ տնօրենը): Մրցույթի արդյունքում աշխատանքի են ընդունվել նախկին աշխատակիցները և 1 աշխատակից՝ կառավարման համակարգի և միջազգային կապերի պատասխանատու, 2 աշխատակից՝ մասնագետ: 2014 թ-ի մայիսի 15-ին անցկացվել է մրցույթ ՀԱՄ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար, որի արդյունքում ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2014 թ-ի մայիսի 22-ի N 484-Ա հրամանի համաձայն նշանակվել է ՀԱՄ-ի տնօրեն:

Այժմ ՀԱՄ-ում աշխատում են 12 աշխատակից:

ՀՀ հավատարմագրման ազգային համակարգի կառուցվածքը





3. Կառավարման համակարգը

ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության որակի ենթակառուցվածքի բարեփոխման ռազմավարություն (2010-2010թթ.)» 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 1693-Ն որոշման հիման վրա ՀԱՄ-ում անհրաժեշտ է ներդնել կառավարման համակարգ՝ համաձայն ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17011-2009 ստանդարտի:

3.1 ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտի պահանջներին համապատասխան կառավարման համակարգ ներդնելու նպատակով ՀԱՄ-ը մշակել է կառավարման համակարգի ընթացակարգերի՝ ներառյալ ձևերի, հետևյալ նախագծերը.

- ✚ Կառավարման ձեռնարկ,
- ✚ Հավատարմագրման փորձագետների (գնահատողների) և տեխնիկական փորձագետների որակավորման ընթացակարգ,
- ✚ Հավատարմագրման ընթացակարգ,
- ✚ Անհամապատասխանությունների կառավարման, ուղղիչ և կանխարգելիչ գործողությունների ընթացակարգ,
- ✚ Ներքին աուդիտի անցկացման ընթացակարգ,
- ✚ Ղեկավարության կողմից վերլուծության ընթացակարգ,
- ✚ Հավատարմագրման ընդլայնման կամ կրճատման ընթացակարգ,
- ✚ Փորձարկման լաբորատորիաների հավատարմագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ,
- ✚ Տրամաչափարկման լաբորատորիաների հավատարմագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ,

- ✚ Սերտիֆիկացման մարմինների հավատարմագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ,

- ✚ Տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների հավատարմագրմանը ներկայացվող ընդհանուր պահանջներ,

- ✚ Նոր ստանդարտների անցումային շրջան սահմանելու վերաբերյալ քաղաքականություն,

- ✚ ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17065 ստանդարտի անցումային շրջան սահմանելու վերաբերյալ քաղաքականություն,

- ✚ Վերապահումներով հավատարմագրման վերաբերյալ քաղաքականություն,

- ✚ Համապատասխանության գնահատման մարմինների մասնագետներին որպես փորձագետներ (աուդիտորներ) որակավորման ընթացակարգ,

- ✚ Չափագիտական հետևելիության վերաբերյալ

- ✚ Որակավորման ստուգմանը (PT) և միջլաբորատոր համեմատություններին (ILC) մասնակցելու վերաբերյալ քաղաքականություն,

- ✚ Չափման անորոշությունների գնահատման վերաբերյալ քաղաքականություն,

- ✚ Անդրսահմանային հավատարմագրման վերաբերյալ քաղաքականություն:

Հաստատվել, ներդրվել և ՀԱՄ-ի անձնակազմին իրազեկվել են հետևյալ փաստաթղթերը՝

- ✚ Բողոքարկման հանձնաժողովի գործունեության և քողոքարկումների քննարկման կարգ

- ✚ PR-01 «Հաշվառման ենթակա բլանկներով ապահովման ընթացակարգ»,

- ✚ PR-5.3 «Փաստաթղթերի կառավարման ընթացակարգ»,

- ✚ PR-5.4 «Գրառումների կառավարման ընթացակարգ»,

- ✚ Որակի քաղաքականություն,

- ✚ Գնահատման խմբի կազմի վերաբերյալ ՀԳՄ-ի կողմից առարկության քաղաքականություն,

- ✚ Հավատարմագրման նշանի կիրառման վերաբերյալ քաղաքականություն:

4. Հավատարմագրման փորձագետների (գնահատողների) ուսուցում

Հավատարմագրման փորձագետների (գնահատողների) ուսուցում՝ ԻՍՕ/ԻԷԿ 17000 շարքի ստանդարտների կիրառման ուղղությամբ, համապատասխան տեղեկատվություն հավատարմագրմանը վերաբերող եվրոպական իրավական ակտերի, ինչպես նաև միջազգային և եվրոպական հավատարմագրման համագործակցությունների կողմից ընդունված լրացուցիչ պահանջների վերաբերյալ:

4.1 «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի նախաձեռնությամբ՝

- միջազգային աուդիտոր Կարեն Ազարյանը սույն թվականի նոյեմբերի 5-12-ը անցկացրել է ՀՍ ԻՍՕ 19011-2012 Ղեկավար ցուցումներ կառավարման համակարգերի աուդիտի վերաբերյալ ուսուցողական դասընթաց, որի արդյունքում ձեռք են բերվել գիտելիքներ ներքին աուդիտի կազմակերպման և իրականացման վերաբերյալ,

- համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման գործընթացում ներգրավված 5 գնահատող սույն թվականի նոյեմբերի 10-14-ը և դեկտեմբերի 17-19-ը գործուղվել են Մոլդովայի հավատարմագրման մարմին (MOLDAC) վերապատրաստման դասընթացների՝ ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 Փորձարկման և ստուգաճշտման լաբորատորիաների իրազեկությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ և ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013 Համապատասխանության գնահատում. Արտադրանքի, գործընթացների և ծառայությունների սերտիֆիկացման մարմիններին ներկայացվող պահանջներ թեմաներով: Դասընթացների արդյունքում ձեռք են բերվել գիտելիքներ և փորձ՝ նշված ստանդարտների կիրառման ուղղությամբ (5 սերտիֆիկատ),

- համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման գործընթացում ներգրավված 3 գնահատող ուսուցողական այցով գործուղվել են Մոլդովայի մայրաքաղաք Քիշնև: Ուսուցողական այցի շրջանակներում սույն թվականի դեկտեմբերի 15-16-ը այցելել են MOLDAC-ի կողմից հավատարմագրված սերտիֆիկացման մարմիններ, որի արդյունքում ձեռք են բերվել գիտելիքներ և փորձ սերտիֆիկացման մարմնի կառավարման համակարգի և սերտիֆիկացման գործընթացի կազմակերպման և իրականացման վերաբերյալ,

4.2 GIZ Գերմանիայի միջազգային զարգացման կազմակերպության տեխնիկական օժանդակության ներքո «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը ճանաչողական այցի շրջանակներում այցելել է Բելգրադ (Սերբիայի Հանրապետություն) «Որակի ենթակառուցվածքների մարտահրավերները և համագործակցության հնարավորությունները կայուն տնտեսական աճի և մասնավոր հատվածների զարգացման խթանման համար» տարածաշրջանային միջոցառմանը մասնակցելու համար:

5. Հավատարմագրման ոլորտին առնչվող օրենսդրական և իրավական ակտերի մշակում

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից առաջարկություններ է ներկայացվել հավատարմագրման ոլորտին առնչվող հետևյալ օրենսդրական և իրավական ակտերի մշակման, փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ, մասնավորապես՝

➤ «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ,

➤ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ի N 1201-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ,

➤ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 199-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ,

➤ «Հավատարմագրման ազգային մարմնի կողմից կատարված հավատարմագրման ծառայությունների, գնահատումների համար համապատասխանության գնահատման մարմնի կողմից իրականացվող վճարման, համապատասխանության գնահատման մարմնի և Հայաստանի Հանրապետությունում գործող, միջազգային ճանաչում ունեցող միակողմանի ճանաչված օտարերկրյա հավատարմագրման մարմինների կողմից հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմնի կողմից կատարված համապատասխանության գնահատման ծառայությունների մատչելիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ,

նության գնահատման գրանցված մարմնի տարեկան անդամավճարի վճարման չափը և կարգը հաստատելու մասին» ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանի նախագիծ,

➤ մասնակցել է ՄՄ հանձնաժողովի N°319, N°77, N°293, N°76 որոշումների հայերեն թարգմանությունների փորձաքննության աշխատանքներին, ինչպես նաև տրամադրել կարծիք Մաքսային միությունում տեխնիկական կանոնակարգման մասին ՀՀ կառավարության որոշումների (ՄՄ հանձնաժողովի N°319 և N°77) նախագծերի վերաբերյալ,

➤ մասնակցել է Հայաստանի Հանրապետության՝ Մաքսային միությանը և Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքին միանալու հարցերով աշխատանքային խմբի 4-րդ նիստի աշխատանքներին,

➤ մասնակցել է Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում կազմակերպված կլոր սեղաններին, որի ընթացքում քննարկվել են Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը, համապատասխանության գնահատման սխեմաները և Մաքսային Միության այլ որոշումներ:

6. Հավատարմագրման ոլորտի միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերի և ուղեցույցների թարգմանություն

Հայերեն թարգմանվել է հավաքարմագրման ոլորտի հետևյալ միջազգային փաստաթղթերը և ուղեցույցները

➤ ILAC P9:11/2010 - ILAC-ի քաղաքականությունը որակի ստուգման գործունեությանը մասնակցելու համար (ILAC Policy for Participation in Proficiency Testing Activities),

➤ ILAC P14:01/2013 - Տրամաչափարկման ժամանակ անորոշությունների ILAC-ի քաղաքականությունը (ILAC Policy for Uncertainty in Calibration):

7. Հավատարմագրման ծառայություններին և ոլորտին առնչվող հարցերի լուսաբանման և իրազեկման միջոցառումների կազմակերպում

7.1 Համաձայն «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի հավատարմագրման ծառայություններին և ոլորտին առնչվող հարցերի լուսաբանման և իրազեկման միջոցառումների կազմակերպման» ծրագրի, ՀԱՄ-ը նախապատրաստել է TAIXEY Workshop «ԵՄ-ի հավատարմագրման քաղաքականության և գործելակերպի ներկայացում» թեմայով հայտը և ներկայացրել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ սահմանված կարգով ընթացք տալու նպատակով: TAIXEY Workshop-ի հայտում ներառվել են հետևյալ թեմաները՝

- ◆ Չափումների հետևելիությունը, չափման միջոցների տրամաչափարկումը,
- ◆ Չափումների անորոշության որոշումը/գնահատումը,
- ◆ Լաբորատորիաների մասնակցությունը միջլաբորատոր համեմատություններին կամ որակավորման ստուգման ծրագրերին և այլն:

2014 թվականի մայիսի 2-ին «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը Եվրոպական հանձնաժողովի կողմից ստացել է գրություն, որի համաձայն մերժվել է հայտը՝ ռեսուրսների սակավության պատճառով:

7.2 2014 թվականի ընթացքում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել է պարբերաբար արդիականացվող տեղեկատվություն՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության /www.mineconomy.am/ էլեկտրոնային կայքի «Հավատարմագրում» բաժնում տեղադրելու նպատակով:

Պարբերաբար արդիականացվել է հետևյալ տեղեկատվությունը՝

- Հավատարմագրման նպատակները, հավատարմագրման սկզբունքները, հավատարմագրման ոլորտին առնչվող օրենսդրական և իրավական ակտերը, համապատասխանության գնահատման մարմինների տեսակները, հավատարմագրման չափանիշներն ու պահանջները, հավատարմագրման գործընթացին առնչվող փաստաթղթերը, մասնավորապես հայտատուների կողմից հավատարմագրման նպատակով ներկայացվող հայտերի և հավատարմագրման փաստաթղթերի ձևաչափերը, ՀԳՄ-ների հավատարմագրման վերաբերյալ հավատարմագրման

որոշումները, ՀՀ-ում հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների ու սերտիֆիկացման մարմինների ցանկերը և այլն:

8. ՀԱՄ-ի կողմից գիտաժողովների, վերապատրաստման դասընթացների կազմակերպում և համապատասխան վկայագրերի տրամադրում

Հավատարմագրման ազգային մարմնի կողմից կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ հետևյալ թեմաներով.

- «Համապատասխանության գնահատման ստանդարտներ, միջազգային հավատարմագրում, ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17025-2005 ստանդարտի հիմնական պահանջներ» թեմայով 2 վերապատրաստման դասընթաց: Դասընթացին մասնակցել են 27 փորձարկման լաբորատորիաներից ընդհանուր թվով 42 ներկայացուցիչներ և ստացել են վկայագրեր:

- «Համապատասխանության գնահատում, միջազգային հավատարմագրում, ՀՍ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013 ստանդարտի հիմնական պահանջներ» թեմայով 1 վերապատրաստման դասընթաց: Դասընթացին մասնակցել են 13 արտադրանքի սերտիֆիկացման մարմիններից ընդհանուր թվով 24 ներկայացուցիչներ և ստացել են վկայագրեր:

9. Համապատասխանության գնահատման մարմինների (ՀԳՄ) հավատարմագրման գործընթացի կազմակերպում և հավատարմագրում

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ի N 1201-Ն որոշման 1-ին կետով հաստատված համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման կարգի՝ իրականացվել են ստորև նշված համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման նպատակով ներկայացված հավատարմագրման գործընթացի կազմակերպման աշխատանքները:

ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՍԵՐՏԻՖԻԿԱՅ- ՄԱՆ ՄԱՐՄԻՆ	ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ	ԸՆԴԱՄԵՆԸ
2014 թ.				
Հավատարմագրման հայտեր	6	11	1	18
Հավատարմագրման գործընթացը				
Գնահատման խմբի ծնավորում	6	11	1	18
Փաստաթղթերի փորձաքննություն	17	9	1	27
Լրացուցիչ փաստաթղթերի փորձաքննություն	26	7	1	34
Գնահատում ըստ գտնվելու վայրի	27	7	1	35
Պարբերական գնահատում	1	5	0	6
Հավատարմագրման վերաբերյալ որոշումը				
Հավատարմագրման վկայագրի տրամադրում	7	20	1	28

10. ՀԱՄ-ի տեղեկատվական տեխնոլոգիաներով ապահովում

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կայքէջի ստեղծման, սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների, և Մաքսային միության տեխնիկական կոնոնակարգերի համաձայն տրված համապատասխանության սերտիֆիկատների, հայտարարագրերի միասնական ռեեստրների ազգային

ձևավորման ավտոմատացված ծրագրային ապահովման նպատակով, «Ինստիտյութ մորալ» ՓԲԸ-ի կողմից մշակվել է Հավատարմագրման ազգային մարմնի գործառույթների ավտոմատացման համակարգի տեխնիկական առաջադրանքը: Հիմք ընդունելով մշակված տեխնիկական առաջադրանքը, ծրագրավորողների կողմից ստեղծվել է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կայքէջը (www.armnab.am) և նշված ռեսուրսները և տարվում են պահանջվող տեղեկատվության մուտքագրման աշխատանքներ:

11. Մասնակցություն միջազգային և տարածաշրջանային հավատարմագրմանն առնչվող աշխատաժողովներին և գագաթնաժողովներին

11.1 Ի կատարումն 2014թ. հունվարի 24-ի «ԱՊՀ անդամ երկրների հավատարմագրման ազգային մարմինների համագործակցության մասին» հուշագրի 1-ին կետում նշված դրույթի՝

- «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի 1 ներկայացուցիչը մասնակցել է 2014 թվականի սեպտեմբերի 29-30 Ռուսաստանի Դաշնության Կալինինգրադ քաղաքում կայացած «Եվրասիական տարածաշրջանային երկրների հավատարմագրման ազգային համակարգերի ներդաշնակեցում» թեմայով միջազգային սեմինարին և ԱՊՀ անդամ երկրների հավատարմագրման ազգային մարմինների ղեկավարների խորհրդակցությանը: Խորհրդակցության արձանագրությամբ ստեղծվել է հավատարմագրման ազգային մարմինների ղեկավարների Խորհուրդը և հաստատվել է «Հավատարմագրման ազգային մարմինների խորհրդի դրույթներ» փաստաթուղթը:

- «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի 2 ներկայացուցիչ մասնակցել են 2014 թվականի նոյեմբերի 27-ին Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում կայացած հավատարմագրման մարմինների տարածաշրջանային համագործակցության ստեղծման հարցերով ՄՊԽ Աշխատանքային խմբի երկրորդ նիստի աշխատանքներին: Խորհրդակցության ընթացքում քննարկվել է ՄՊԽ Աշխատանքային խմբի «Տիպային դրույթներ» փաստաթուղթը, աշխատանքային քարտեզի նախագծի մասին: Հավատարմագրման մարմինների տարածաշրջանային համագործակցության

կանոնադրության նախագիծը և հավատարմագրման տարածաշրջանային համագործակցության ստեղծման հարցը:

11.2 «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի 2 ներկայացուցիչ մասնակցել են 2014 թվականի դեկտեմբերի 22-ին Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում կայացած «Ռուսաստանի Դաշնության հավատարմագրման համակարգի բարեփոխումներ» կոնֆերանսին: Կոնֆերանսին զեկուցվել է Ռուսաստանի Դաշնության հավատարմագրման ծառայության իրավական կարգավորման, բարեփոխումների գործնական իրացման, հավատարմագրման գործընթացում հասարակության մասնակցության, հավատարմագրման ժամանակ մաքսային միության տեխնիկական կանոնակարգերի պահանջներին ընդհանուր մոտեցման մասին: Ձևավորվել են աշխատանքային խմբեր սերտիֆիկացման մարմինների, փորձարկման լաբորատորիաների, տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների և չափումների միասնականության ապահովվման ոլորտում աշխատող փորձագետների մասնակցությամբ, որտեղ քննարկվել են նշված հարցերը:

11.3 ՀԱՄ-ի ներկայացուցիչը 2014թ. հոկտեմբերի 20-23-ը մասնակցել է Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում Եվրամիության Արևելյան գործընկերության հրավերով կայացած «Տնտեսական ինտեգրման և ԵՄ քաղաքականություններին մոտարկման» պլատֆորմի ներքո գործող առևտրի հարցերով պանելի հերթական 13-րդ նիստին: Նիստի ընթացքում քննարկվել են տեխնիկական կանոնակարգման, համապատասխանության գնահատման, չափագիտության, հավատարմագրման և շուկայի վերահսկողության բնագավառում ԵՄ-ում գործող ընթացակարգերի և նիստի մասնակից պետություններում նշված բնագավառում այդ ընթացակարգերի պահանջներին ներդաշնակեցմանն ուղղված և իրականացվող բարեփոխումների վերաբերյալ և հետագա համագործակցությանն առնչվող այլ հարցեր:

11.4 ՀԱՄ-ի 2 ներկայացուցիչ ՌԴ տնտեսական զարգացման նախարարության հավատարմագրման դաշնային ծառայության հրավերով 2014թ. հունվարի 24-ի «ԱՊՀ անդամ երկրների հավատարմագրման ազգային մարմինների համագործակցության մասին» հուշագրի 1-ին կետում նշված դրույթի համաձայն 2014թ. նոյեմբերի 26-27-ը մասնակցել են Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում և

հավատարմագրման մարմինների տարածաշրջանային համագործակցության ստեղծման հարցերով ՄՊԽ Աշխատանքային խմբի (Աշխատանքային խումբ) երկրորդ նիստի աշխատանքներին, որի ընթացքում քննարկվել են հարցեր՝ Հավատարմագրման մարմինների տարածաշրջանային համագործակցության ստեղծման հարցերով ՄՊԽ Աշխատանքային խմբի դրույթի, Հավատարմագրման մարմինների տարածաշրջանային համագործակցության կանոնադրության նախագծի, «ԱՊՀ անդամ երկրների հավատարմագրման ազգային մարմինների համագործակցության մասին» հուշագրի կիրարկումն ապահովելու նպատակով աշխատանքային քարտեզի նախագծի վերաբերյալ: Աշխատանքային խմբի երկրորդ նիստի աշխատանքների արդյունքում ստորագրվել է արձանագրություն և առաջարկվել է ուսումնասիրել ՄՊԽ աշխատանքային խմբի «Տիպային դրույթներ» փաստաթուղթը և ներկայացնել առաջարկություն Աշխատանքային խմբի «Դրույթներ» փաստաթղթի մշակելու նպատակահարմարության վերաբերյալ, ներկայացնել առաջարկություններ և առարկություններ Հավատարմագրման մարմինների տարածաշրջանային համագործակցության Կանոնադրության և Աշխատանքային խմբի աշխատանքների ծրագրի նախագծերի վերաբերյալ:

11.5 «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի 2 ներկայացուցիչ 2014 թ. նոյեմբերի 19-20-ը մասնակցել են Հաագայում (Նիդերլանդներ) կայացած Հավատարմագրման Եվրոպական Համագործակցության (EA) 34-րդ գագաթնաժողովին: Գագաթնաժողովին մասնակցության ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել EA-ի ասոցացված հավատարմագրման մարմինների հետ՝ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի Հավատարմագրման Եվրոպական համագործակցության (EA) ասոցացված անդամ դառնալու ուղղությամբ տարվող աշխատանքներում աջակցության վերաբերյալ:

12. Այլ աշխատանքներ

12.1 «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը՝

- մասնակցել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի ՏՀ 21 «Համապատասխանության գնահատում և կառավարման համակարգեր» տեխնիկական հանձնաժողովի աշխատանքներին,

- ապահովել է համապատասխանության գնահատման մարմինների մասնակցությունը Մաքսային միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակներում կազմակերպված կլոր սեղաններին, որի ընթացքում ներկայացվել են՝ Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերը, համապատասխանության գնահատման սխեմաները և Մաքսային միության այլ որոշումներ,

12.2 Մշակվել և ներկայացվել է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի, ինչպես նաև Որակի ենթակառուցվածքի բարեփոխումների մասով 2015-2017թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի (ՄԺԾԾ) հայտերի, ինչպես նաև 2015 թվականի բյուջետային հայտերի նախագծերը:

12.3 «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան կազմակերպվել են գրասենյակային ապրանքների և վառելիքի գնման գործընթացները:

12.4 «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը հանդիպումներ է ունեցել Արևելյան գործընկերության ներքո կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների համապարփակ ծրագրի (CIB) շրջանակում UNIDO-ի, ինչպես նաև Համաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ «Հավատարմագրման ազգային մարմնի (ՀԱՄ) հզորացում՝ ԼՀՄՀ/ՄՀՖ-ի աֆիլացված և ՀԵՀ-ի ասոցացված անդամ դառնալու նպատակով» թեմայով: Բանակցությունների արդյունքում ՀԱՄ-ը UNIDO-ին և Համաշխարհային բանկին ներկայացրել է միջոցառումների ծրագիր:

12.5 Հաշվետու ժամանակաշրջանում «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են ընթացիկ աշխատանքներ, պատասխանվել են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունից, մի շարք կազմակերպություններից ստացված գրություններին:

13. Գործունեության ֆինանսատնտեսական արդյունքները

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	8266.4	11815.9
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020		
Ոչ նյութական ակտիվներ	030	278.0	
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040		
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050		
Հետաձգված հարկային ակտիվներ	060		
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070		
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	8544.4	11815.9
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	226.0	991.6
Աճեցվող և բավող կենդանիներ	100		
Արագամաշ առարկաներ	110		369.4
Անավարտ արտադրություն	120		
Արտադրանք	130		144.0
Ապրանքներ	140		
Տրված ընթացիկ կանխավճարներ	150	20.0	86.0
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	420.0	7985.8
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170		
Այլ դեբիտորական պարտքեր	180		
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	200	14145.0	19978.4
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210		
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	14811.0	29555.2
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ			
	230	23355.4	4137

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գուտ գումար	240		
Էմիսիոն եկամուտ	250		
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	260		
Կուտակված շահույթ	270	(3329.6)	26371.2
Պահուստային կապիտալ	280		
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	290		
Ընդամենը սեփական կապիտալ	300	(3329.6)	26371.2
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310		
Հետաձգված հարկային պարտավորություններ	320		
Ակտիվներին վերաբերող շնորհներ	330	8544.4	11815.9
Ոչ ընթացիկ պահուստներ	340		
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	350		
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	8544.4	11815.9
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370		
Կարճաժամկետ փոխառություններ	380		
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390		
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	17050.0	110.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	1090.6	2858.2
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական	420		195.7
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ	430		
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին	440		
Այլ կրեդիտորական պարտքեր	450		20.1
Եկամուտներին վերաբերող շնորհներ	460		
Ընթացիկ պահուստներ	470		
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	480		
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	18140.6	3184
Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ			
	500	23355.4	41

Ֆուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական)	Նախորդ տարվա միջանկյալ ժամանակաշրջան	Հաշվետու տարվա միջանկյալ ժամանակաշրջան
1	2	3	4	5	6
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	13871.5	57962.4		
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(2632.0)	(6237.1)		
Համախառն շահույթ (վնաս)	030	11239.5	51725.3		
Իրացման ծախսեր	040				
Վարչական ծախսեր	050	(14569.1)	(21595.2)		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	(3329.6)	30130.1		
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝	070	25830.9	31637.2		
	072				
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝	080	25830.9	31637.2		
	081				
Գործառնական շահույթ (վնաս)	090		30130.1		
Ֆինանսական ծախսեր	100				
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	110				
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	120				
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս), այդ թվում՝	130				
	131				
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	(3329.6)	30130.1		
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	150				
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	(3329.6)	30130.1		
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	170		(429.3)		
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	180	(3329.6)	29700.8		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ (վնաս)*	190				
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նուսրացված շահույթ (վնաս)*	200				